ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ
ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՎՀՀ 03804314

Ք. Մասիս Դպրոցականների 1, հեռ. /0236/ 4-26-02, էլ. փոստ. masis2@schools.am

«Հայկազունք» ՍՊ ընկերության տնօրեն
Կարեն Մացակյանին
(հասցե՝ ք.Երևան,Չարենցի 70/8,տարածք 71)

№ 219 (05.12.2023թ.)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

(պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը՝ի դեմս Պատվիրատուի ղեկավար (տնօրեն) Ա.Նազարյանի (այսուհետ՝ Գնորդ) և «Հայկազունք» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Կ.Մացակյանի (այսուհետ՝ Վաճառող) 11.08.2023 թվականին կնքել են «ԱՄՄՀՀԴ- ԳՀԱՊՁԲ-23/04» ծածկագրով «ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ,որի կատարման վերջնաժամկետն է 25.12.2023 թվական:«Հայկազունք» ՍՊԸ-ն ս/թ նոյեմբերի 24-ից չի մատակարարել գնման-ժամանակացուցով նախատեսված սննդամթերքը (այսուհետ՝ ապրանք),այն է՝ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել է՝ մինչև 04.12.2023 թվականի դրությամբ չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը,չի պատասխանում հեռախոսազանգերին,մինչդեռ Պայմանագրի 2.4 կետի և 2.4.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված սննդամթերքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով,ապրանքների,աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետի համաձայն՝Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «Հայկազունք» ՍՊԸ-ի միջև 11.08.2023թ. կնքված «ԱՄՄՀՀԴ- ԳՀԱՊՁԲ-23/04» ծածկագրով պայմանագիրը:
Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը խախտելու համար Մատակարարին տրվում է 10 աշխատանքային օր որակավորման և պայմանագրի ապահովումները համապատասխանաբար 33403,68(երեսուներեք հազար չորս հարյուր երեք ամբողջ վաթսունութ հարյուրերwրդական) ՀՀ դրամի և 22269,12(քսաներկու հազար երկու հարյուր վաթսունինը ամբողջ տասներկու հարյուրերորդական) ՀՀ դրամի չափով վճարում կատարելու համար:Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին(ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900438000094):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել և ներկայացնել Լիազոր մարմին՝«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն «Հայկազունք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք ,որ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տնօրեն՝ Ա.Նազարյան